



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ»
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ



USAID
FROM THE AMERICAN PEOPLE

ԱՄՆ ՄՁԳ ՀԱՅԱՍՏԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ
ՀՁՈՐԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

**USAID ARMENIA, SOCIAL
PROTECTION SYSTEMS
STRENGTHENING PROJECT**

ՍՊՀՀ մամլո հաղորդագրություն # [17]

Երևան, Հայաստան
31 հոկտեմբերի, 2008թ.

ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**«Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության կողմից իրականացված
«Գործատուների ընտրանքային հետազոտության» արդյունքների վերաբերյալ**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (ԱՍՀՆ) «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության (ԶՊԾԳ) կողմից 2008թ. մայիս-հունիս ամիսներին անց է կացվել հանրապետությունում գրանցված գործատուների՝ կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի ընտրանքային հետազոտություն, որն ուղղված էր աշխատաշուկայի ուսումնասիրության, վերլուծության և կանխատեսման մեխանիզմների կատարելագործմանը, ինչպես նաև գործակալության կողմից հավաքագրվող և առկա ցուցանիշների կազմի ու բովանդակության ընդլայնմանը: Հետազոտության իրականացմանն աջակցել է ԱՄՆ ՄՁԳ Սոցիալական պաշտպանության համակարգերի հզորացման (ՍՊՀՀ) ծրագիրը:

Հետազոտությունը հնարավորություն է ընձեռել տեղեկատվություն հավաքագրել տնտեսության մեջ և աշխատաշուկայում տեղի ունեցող փոփոխությունների, աշխատուժի կազմի, կառուցվածքի ու շարժի, աշխատուժի պակասի ու ակնկալվող պահանջարկի, ինչպես նաև զբաղվածության պետական ծառայություն-գործատու հարաբերությունների, համագործակցության առանձնահատկությունների, զարգացման մեխանիզմների ու խթանման հնարավորությունների և այլ ցուցանիշների վերաբերյալ:

Հետազոտության արդյունքները հնարավորություն են տալիս գնահատել տնտեսության և աշխատաշուկայի կարճաժամկետ միտումները, բացահայտել կանխատեսվող աշխատատեղերը, աշխատուժի նկատմամբ գործատուների պահանջները, հստակեցնել գործատու-ԶՊԾԳ համագործակցության ընդլայնման հեռանկարները և նախանշել համատեղ ծրագրերի իրականացման ուղղությունները:

Ընտրանքային հետազոտության մեջ ընդգրկվել է շուրջ 3752 գործատու, այդ թվում՝ 3252 կազմակերպություն և 500 անհատ ձեռնարկատեր: Հետազոտության արդյունքում տեղեկատվություն է հավաքագրվել 2967 կազմակերպության վերաբերյալ:

Դիտարկման պահի դրությամբ, հետազոտված կազմակերպություններում աշխատողների ընդհանուր թվաքանակը կազմել է 170,726 մարդ: Կանայք կազմել են աշխատողների ընդհանուր թվաքանակի 45.9%-ը: Միջին հաշվով հաշմանդամների

տեսակարար կշիռը դիտարկված կազմակերպություններում կազմել է 1.7%: Աշխատող կենսաթոշակառուները կազմել են ընդամենի 4.9%-ը, իսկ աշխատող փախստականների տեսակարար կշիռը կազմել է ընդամենի 0.55%-ը:

Գիտարկված կազմակերպություններում աշխատողների թվաքանակի տարիքային բաշխվածությունը վկայում է 31-50 տարեկանների տեսակարար բարձր կշռի մասին, որը կազմել է ընդամենի 53.1%-ը, իսկ 51 և ավելի ու մինչև 30 տարեկանների տեսակարար կշիռները կազմել են համապատասխանաբար 25.4% և 21.5%:

Ստացված արդյունքների համաձայն, 2008թ. աշխատողների թվաքանակը դիտարկվող կազմակերպություններում աճել է 9329 մարդով կամ-5.5%-ով նախորդ 1 տարվա համեմատ:

Առաջիկա մեկ տարում նույնպես կգրանցվի դրական տեղաշարժ և աշխատողների թվաքանակը կավելանա 6361 մարդով կամ 3,6%-ով: Իսկ 2010թ. աշխատողների թվաքանակի տարբերությունը դիտարկվող ժամանակահատվածի համեմատ կկազմի 5208 կամ 3.0%-ով: Նշենք, որ նման հակասությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ գործատուների մի զգալի մասը վստահ չէ 1 տարուց ավելի ժամանակահատվածում տնտեսության մեջ տեղի ունեցող փոփոխությունների՝ իր գործունեության նկատմամբ դրական ազդեցությանը: Ուստի շատերը խուսափել են համապատասխան հարցին պատասխանելուց:

Թափուր աշխատատեղերի լրացման դժվարություններ են ունեցել հարցված գործատուների ընդամենի 20.5%-ը: Գործատուները հատկապես դժվարացել են լրացնել հետևյալ մասնագիտություններով թափուր աշխատատեղերը՝ շինարարական, եռակցողների, գազակտրողների, դասավանդողների, բժիշկների, ճարտարագետների, բանվորների (հացաթխման, հրուշակեղենի և այլն), գործակալների, առաքիչների, խոհարարների և այլն:

ԶՊԾԳ-ի մատուցած ծառայություններից օգտվել են հարցված գործատուների ընդամենի 45.7%-ը, չեն օգտվել՝ 54.3%-ը:

Ընդհանուր առմամբ գործատուներն օգտվել են ԶՊԾԳ կողմից մատուցված բոլոր ծառայություններից: Ծառայությունների համացանկում գերակշիռ մեծամասնություն են կազմել զբաղվածության օրենսդրության վերաբերյալ մատուցված խորհրդատվությունը և աշխատաշուկայի վերաբերյալ տեղեկատվությունը: